ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունիսի 2020թ. թիվ 477-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի պետ Վ.Հովհաննիսյանի զեկուցագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից Վ. Հովհաննիսյանին հատկացնել 180000 /մեկ հարյուր ութսուն հազար/ դրամ՝ Վանաձորում տեղացած հորդառատ անձրևից առավել շատ տուժած ընտանիքներին դրամական աջակցություն տրամադրելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ մեկամսյա ժամկետում կատարել գումարի վճարում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հունիսի 25
ք.Վանաձոր

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

ՀՀ Լոռու մարզպետի մոտ 22.06.2020թ.-ին կայացած խորհրդակցության թիվ 10 արձանագրության 5-րդ կետի հանձնարարականին.

Հարգելի՛ պարոն Ղուկասյան,

«Ֆորտունա» հեռուստաընկերության լրատվական ծառայության կողմից երեկ՝ 20.06.2020թ. եթեր հեռարձակված նյութի հետքերով ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ Վալերի Ջաղինյանը, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄՏՍ գործունեությունը համակարգող բաժնի պետ Վարդան Հովհաննիսյանը, Վանաձորի քաղաքապետարանի կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Կարեն Պառավյանի, բնակարանային տնտեսության և համատիրությունները համակարգող բաժնի առաջատար մասնագետ Վլասիկ Անդրեասյանի և «Կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Տիգրան Վարդանյանը 21.06.2020թ. այցելություն կատարեցին Վանաձորի Ուկրշին տնակային ավան՝ պարզելու 19.06.2020թ. Վանաձորում տեղացած հորդառատ անձրևից առավել շատ տուժած ընտանիքներին:

Տեղում կատարված ուսումնասիրության արդյունքներով և քաղաքացիների հետ զրուցից պարզվել է, որ առավել շատ տուժել են ներքոշարադրյալ երեք ընտանիքները.

1. Հովսեփյան Արմինե /հեռ.՝ 093 23-45-37/ - Ուկրշին տնակային ավան 19-1-2 /այս ընտանիքից է տեսանյութի հաշմանդամություն ունեցող երեխան/
2. Ոսկանյան Տաթևիկ /հեռ.՝ 077 45-91-26/ - Ուկրշին տնակային ավան 19-1-1
3. Հակոբյան Հերիքնազ /հեռ.՝ 098 56-10-31/ -
4. Դարբինյան Ալիկ - Ուկրշին տնակային ավան 19-1-3: Վերջին ամիսներին տեղափոխվել է այլ բնակության հասցե, սակայն այստեղ ունի կենցաղային իրեր, հագուստ, այլ գույք:

1-3 տողերում ներկայացված ընտանիքներին առաջարկվեց Վանաձոր համայնքի ղեկավարի դիմում ներկայացնել, որպեսզի Վանաձորի քաղաքապետարանը համձնաժողովի միջոցով իրականացնի արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական անձանց հասցված վնասի գնահատում, որի արդյունքները կներկայացվի ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը՝ հետագա ընթացք տալու համար:

Միաժամանակ պետք է նշել, որ պարոն Պառավյանը, անսալով քաղաքացիների խնդրանքին՝ խոստացավ, որ առաջիկայում Ուկրշին տնակային ավանի կենտրոնական փողոցում կտեղակայեն գիշերային լուսավորության լամպեր:

ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և
սոցիալական ապահովության վարչության
սոցիալական ապահովության բաժնի պետ Վալերի Ջաղինյան

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄՏՍ
գործունեությունը համակարգող բաժնի պետ Վարդան Հովհաննիսյան